

ՄԵԼԱՆՅԱ ԱՌՈՒՄՏԱՄՅԱԼ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ, ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԱԿՈՐ ԱՆԴԱՄ

Ծնվել է Տավուշի մարզի Չինարի գյուղում:

1991թ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1991-1996թթ աշխատել է Հայէկոնոմբանկում որպես ավագ իրավախորհրդատու:

1996թ հանդիսանում է փաստաբան: Իրականացրել է քրեական, քաղաքացիական և տնտեսականը վարչական գործերով պաշտպանության ՀՀ-ում և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում:

2000-2001թթ հանդիսացել է Հայ փաստաբանների միության կոլեգիայի անդամ, 2001թ-2005 թթ՝ Փաստաբանների միջազգային միության կոլեգիայի անդամ:

2002-2003թթ Պրոմթեքս” հեռուստատեսությամբ “Ընտանեկան փաստաբան” հաղորդաշարով քաղաքացիներին տրամադրել է իրավաբանական օգնություն:

ՀՀ փաստաբանների պալատի հիմնադրումից (2005թ) մինչև օրս հանդիսանում է ՀՀ

փաստաբանների պալատի խորհրդի անդամ (6 անգամ անընդմեջ ընտրվել է խորհրդի անդամ):

2000-2010թթ եղել է ընդգրկված դատավորների պիտանիության ցուցակում:

2006-2011 թվականներին հանդիսացել է Նոտարների թեկնածուների որակավորման ստուգումն իրականացնող հանձնաժողովի անդամ:

2007-2009թթ հանդիսացել է ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան:

2013-2015 թվականներին հանդիսացել է ՀՀ փաստաբանների պալատի Նախագահի տեղակալ:

2017թ-ից դասավանդում է Գլաձոր համալսարանում:

2015թ մինչև օրս հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար:

Երկարամյա փաստաբանական գործունեության և ՀՀ փաստաբանական ինստիտուտի կայացման գործում ներդրած մեծ ավանդի համար 2014 թվականի դեկտեմբերի 27-ին անբասիր աշխատանքի ինչպես նաև աշխատանքային գործունեության ընթացքում ունեցած նշանակալի

ավանդի համար 2014թ սեպտեմբերի 25-ին պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

2015թ ապրիլի 25-ին Փարիզի փաստաբանների պալատի կողմից պարգևատրվել է Փարիզի փաստաբանների պալատի մեդալով: